

Միացեք Հայբիզնեսբանկի թիմին, որպես **Հաճախորդների սպասարկման մասնագետ**: Աշխատանքային փորձը պարտադիր չէ. աշխատանքի անցնելու դեպքում նախատեսված է նաև ուսուցման ծրագիր:

### **Աշխատանքային պարտականություններ**

- Իրականացնում է հաճախորդների սպասարկում
- Բացում, վարում և սպասարկում է ֆիզիկական անձանց հաշիվները
- Բացահայտում է հաճախորդների պահանջմունքները, իրականացնում է խաչաձև վաճառքներ
- Կատարում է փոխանցումներ և վճարումներ՝ ներբանկային և միջբանկային
- Կատարում է փոխանցումներ և վճարումներ՝ փոխանցման համակարգերի միջոցով
- Իրականացնում է չեկային գործարքներ
- Սպասարկում է վճարային քարտեր՝ Pos-տերմինալների միջոցով
- Կատարում է դրամարկղային գործարքներ՝ սահմանված սահմանաչափերի շրջանակում
- Կնքում է ավանդային և վճարային քարտերի պայմանագրեր (տվյալների ներմուծում)
- Կատարում է կոմունալ վճարումների սպասարկում
- Իրականացնում է արտարժույթի փոխանակում
- Սպասարկում է Բանկ-Հաճախորդ համակարգը
- Տրամադրում է խորհրդատվություն բանկային ծառայությունների ամբողջ ծավալով

### **Անհրաժեշտ պահանջները**

- Բարձրագույն կրթություն
- Տնտեսագիտական բազային գիտելիքներ
- Հայերենի գերազանց տիրապետում
- Ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն
- Համակարգչային գիտելիքների իմացություն
- Աճի և զարգացման ձգտում

## **Դիմելու ընթացակարգը**

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը [hr@armbusinessbank.am](mailto:hr@armbusinessbank.am) հասցեին:

Վերջնաժամկետ՝ 24.03.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Customer Service-Name,Surname":